1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ)-ի հետ (ՀՎՀՀ՝ 02508003) 2012 թվականի ապրիլի 17-ին կնքված՝ N ԲՊԱՀ-ԾՁԲ-12/4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղերի և բժշկական նշանակության ապրանքների մաքսազերծման, բեռնափոխադրման կազմակերպման, բեռների տրանսպորտային մշակման և պահման ծառայությունների մատուցում՝ 998000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**ՈՐՈՇՈՒՄ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ-352-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցու-թյուն» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի ապրիլի 27-ի N ՍՔ/15-1/3781 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 3-ի N 3/3.8-1/5761-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 2-ի N ԱԱ//3-4/3899-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տոնուս-Լես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00064506) 2012 թվականի ապրիլի 5-ին կնքված՝ N ԾՀԱՊՁԲ-11/4-12 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի ձեռքբերում՝ 180840 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ-353-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 10-ի N 3/3.8-2/6061-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի մայիսի 8-ի N 03/07-1/4565-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 8-ի N ԱԱ/3-6/4232-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից հատկացված գումարներով գնված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի (ուսումնական սարքեր՝ ռադիոհաճախային տիրույթի ավտոմատացված ընդունիչ-հաղորդիչ համակարգի բաղադրամասեր 2 տեղ, 21 կգ քաշով, 35246.23 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ փոխադրման ծախսերը կազմել են 552.07 ԱՄՆ դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» Մ/Տ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ-354Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (1)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 10-ի N 3/3.8-2/6052-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի մայիսի 10-ի N 3/07-1/4593-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 8-ի N ԱԱ/3-6/4226-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի Դաշնության կրթության և գիտության նախարարության կողմից հատկացված դրամաշնորհի գումարներով գնված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի (ուսումնագիտական սարք՝ «Manual Polarizer Accessory» տեսակի կցորդ՝ ֆլուորեսցենց սպեկտրոֆոտոմետրի համար 1 տեղ, 1,2 կգ քաշով, 2906 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 մայիսի 2012 թվականի N Մ-** 355 **-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-119-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 10-ի N 3/3.8-1/6086-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 8-ի N ԱԱ/3-4/4228-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2011-2012 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-119-Ա որոշմամբ (2011 թվականի ապրիլի 1-ի N Մ-203-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քեյ-Փի-Էմ-Ջի» ՓԲԸ-ի հետ ՀՎՀՀ՝ 02529689) 2012 թվականի ապրիլի 20-ին կնքված՝ N A/014/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի տարեկան ֆինանսական աուդիտի իրականացում՝ 24150 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ-356-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 3-ի N 3/3.8-2/5751-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մայիսի 2-ի N ՀՔ/22/4027-12, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2012 թվականի մայիսի 4-ի N 1/02.3/1146-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի 2012 թվականի մայիսի 2-ի N 02-Մ-36 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 3-ի N ԱԱ/3-6/3994-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (տեխնեցիումի գեներատոր (Tc99m), 1 տեղ, 16.6 կգ ընդհանուր քաշով, 858 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 315.3 եվրո, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2012 թվականի N Մ-357-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա, ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» և «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրեր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի ապրիլի 17-ի N ԱՔ/15-1/3307-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 2-ի N 3/3.8-1/5655-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 28-ի N ԱԱ/3-4/3851-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-821-Ա և դեկտեմբերի 15-ի N Մ-1070-Ա որոշումների խմբագրություններով), 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա և 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ



պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2012 թվականի ապրիլի 6-ին կնքված N ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-11/1-12/4 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռքբերում՝ 6759948 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (2079984 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում, 2599980 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և 2079984 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ-358Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 09.12.2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2012 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2012 թվականի ապրիլի 17-ի N 1/01/10619-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 2-ի N 3/3.8-1/5650-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մայիսի 3-ի N 02/2650-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 28 -ի N ԱԱ/3-4/3852-12, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 27-ի N 1837-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 10000000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 09.12.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից
Է. Փիրումյան
"12" ապրիլի 2012թ.

# ԾՐԱԳԻՐ

ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 09.12.2011թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի

<table>
<tr><td>1.</td><td>Ծրագրի նպատակը</td><td>«Արփի լիճ» ազգային պարկում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված ազգային պարկի պահպանության բարելավմանը</td></tr>
<tr><td>2.</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից</td></tr>
<tr><td>3.</td><td>Բարեգործը</td><td>Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուլպենհոֆսշտրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա</td></tr>
<tr><td>4.</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ</td></tr>
<tr><td>5.</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Շիրակի մարզ, Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններ<br>«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն»</td></tr>
<tr><td>6.</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համար «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում 10000.0 հազ.դրամ): Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 10-ի:</td></tr>
<tr><td>7.</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ, Շիրակի մարզ, գյուղ Բերդաշեն</td></tr>
<tr><td>8.</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>01.04.2012թ. – 31.12.2012թ.</td></tr>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 09.12.2011թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2012 թվականի ծրագիր՝<br>01.04.2012թ. – 31.12.2012թ. – 10000,0 հազ.դրամ ըստ կցված նախահաշիվ-անվանացանկի՝<br>1. Ազգային պարկի անձնակազմի վարձատրություն – 8442.0 հազ.դրամ<br>2. Գրասենյակային ապրանքների ձեռքբերում– 100.0 հազ.դրամ, այդ թվում՝
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների անվանումը</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազար դրամ)</th></tr>
<tr><td>Քարթրիջ</td><td>հատ</td><td>3</td><td>54,0</td></tr>
<tr><td>Թուղթ</td><td>կգ</td><td>38</td><td>34,0</td></tr>
<tr><td>Գրիչ</td><td>հատ</td><td>22</td><td>2,2</td></tr>
<tr><td>Ֆայլ</td><td>հատ</td><td>200</td><td>2,0</td></tr>
<tr><td>Մատիտ</td><td>հատ</td><td>10</td><td>0,5</td></tr>
<tr><td>Ռետին</td><td>հատ</td><td>6</td><td>0,6</td></tr>
<tr><td>Ռեգիստր</td><td>հատ</td><td>6</td><td>5,4</td></tr>
<tr><td>Արագակար</td><td>հատ</td><td>10</td><td>1,3</td></tr>
</table>
3. Կոմունալ և այլ ծառայությունների ձեռքբերում - 1198,0 հազ.դրամ, այդ թվում՝
<table>
<tr><th>Գնման ենթակա ծառայությունների անվանումը</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազար դրամ)</th></tr>
<tr><td>Բանկային ծառայություններ</td><td>դրամ</td><td>1</td><td>20,0</td></tr>
<tr><td>Էլեկտրաէներգիայի վճար</td><td>դրամ</td><td>1</td><td>1156.3</td></tr>
<tr><td>Ջրմուղ-կոյուղու վարձ</td><td>դրամ</td><td>1</td><td>21.7</td></tr>
</table>
4. Կապի ծառայությունների ձեռքբերում - 160,0 հազ.դրամ, այդ թվում՝
<table>
<tr><th>Գնման ենթակա ծառայությունների անվանումը</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազար դրամ)</th></tr>
<tr><td>Հեռախոսավարձ</td><td>դրամ</td><td>1</td><td>60.0</td></tr>
<tr><td>Ինտերնետային կապի ծառայություն</td><td>դրամ</td><td>1</td><td>100.0</td></tr>
</table>
5. Ավտոտեխսպասարկում – 100.0 հազ.դրամ:</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (վարձվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախահաշվային արժեքը</td><td>1. Գրասենյակային ապրանքների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 100,0 հազ.դրամ<br>2. Կոմունալ և այլ ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 1198,0 հազ.դրամ<br>3. Կապի ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 160.0 հազ.դրամ<br>4. Ավտոտեխսպասարկում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)– 100.0 հազ.դրամ,</td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը</td><td>Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և Շիրակի մարզպետարանի հետ</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը</td></tr>
</table>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2012 թվականի N Մ- 359 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1079-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 11-ի N 3/3.8-1/6170-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 8-ի N ԱԱ/3-4/4230-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2011 թվականի դեկտեմբերի 20-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության ծառայությունների մատուցում» N Մ-1079-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինտ Մոնտաս Գրուփ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02251665) 2012 թվականի ապրիլի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գնորդին սույն պայմանագրի N 2 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի և որակի ապրանքի մատակարարում՝ 108.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2012 թվականի N Մ- 360 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 8-ի N 3/3.8-2/5261-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 8-ի N ԱԱ/3-6/4227-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռը՝ կենցաղային խոհանոցային պարագաներ (13 տեղ, 1454 կգ ընդհանուր քաշով, 337.789.86 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ՝ փոխադրման և այլ ծախսերը կազմել են 53098 ռուսական ռուբլի, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2012 թվականի N Մ- 361 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 15-ի N 3/3.8-1/6385-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 15-ի N ԱԱ/3-4/4555-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Խանջյան 15, 55/1 տարածք, ՀՎՀՀ՝ 01237925) 2011 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված՝ N 11-24 պայմանագրում նշված գործարքը, որով մատակարարը պարտավորվում է գնորդին հանձնել սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածում նշված ապրանքները՝ 3.524.560 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գաշես» ՍՊԸ-ի հետ (քաղ. Արտաշատ, Մարքսի 83, ՀՎՀՀ՝ 04222383) 2012 թվականի ապրիլի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է



շինարարական աշխատանքների իրականացում՝ 20.272.380 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2012 թվականի N Մ - 362 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 17-ի N 3/3.8-1/6518-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 16-ի N ԱԱ/3-4/4616-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մ.Ի.Պ.Հ էլեկտրիկս» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Քանաքեռ ՀԷԿ, շենք 4/1, բն.28, ՀՎՀՀ՝ 01006289) 2012 թվականի ապրիլի 19-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պայմանագրի N 1 հավելվածում նշված պայմաններով Թբիլիսյան խճուղու 11/11 հասցեում էլեկտրամոնտաժային աշխատանքների իրականացում՝ 15.602.996 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Լեգիոն Պարիսպ» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Սունդուկյան 1/59, ՀՎՀՀ՝ 00075973) 2012 թվականի մայիսի 11-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով



նախատեսվում է պայմանագրի N 2 հավելվածում նշված շինարարական աշխատանքների պարտադիր իրականացման պարտավորությամբ կատարել տանիքի ջերմա և ջրամեկուսացման աշխատանքներ՝ 12.852.520 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ - 363 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԴԱՍԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆի-նանսների նախարարության 2012 թվականի մայիսի 4-ի 3/3.8-1/5822-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մայիսի 4-ի N 022667-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 2-ի N 3/3-4/3901-12 եզրակացություն-ները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 7039083 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան հիմնական դպրոցի համակարգչային դասասենյակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2012 թվականի ապրիլի 25-ին կնքված՝ N ԼՂ-Կ-06/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստում, գնում, տեղափոխում և տեղադրում՝ 1374000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2012 թվականի ապրիլի 26-ին կնքված՝ N ԱՎ-Դ-01/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սարքավորումների մատակարարում՝ 5665083 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապե-տության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյան

«27» ապրիլի 2012թ.

«ԼՂՀ Շուշի քաղաքի Խ.Աբովյանի անվան հիմնական դպրոցի համակարգչային դասասենյակի կահավորում »

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի Խ.Աբովյանի անվան հիմնական դպրոցի համակարգչային դասասենյակը համապատասխան կահույքով և համակարգիչներով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղ, Շուշի, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 7.039.083,00 ՀՀ դրամ: |

2

| | | |
|---|---|---|
| 6. | Բարեգործություն ստացողը | ԼՂՀ Շուշի քաղաքի Խ.Աբովյանի անվան հիմնական դպրոցը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ ապրիլի 25-ից մինչեւ 2012թ. օգոստոսի 25-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀՏՏՄ» ՍՊԸ-ի կողմից 31 սեղանի, 45 աթոռի, 2 պահարանի պատրաստում, գնում, տեղափոխում, հավաքակցում եւ անհատույց տեղադրում՝ 1.374.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>Անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանի կողմից 24 համակարգիչների և կից պարագաների վաճառք՝ 5.665.083,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ - 364 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ZENIT ԿԱՅԱՆՔԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՐԳԻՆԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 4-ի N 3/3.8-1/5788-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մայիսի 4-ի N 02/2666-12, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2012 թվականի մայիսի 2-ի N ԳԲ/04.3/2238-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 2-ի N ԱԱ/3-4/3926-12 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի մայիսի 10-ի N 01/05-1/1543 -12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 4300000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հակակարկտային ZENIT կայանքի տեղադրում Բաղրամյանի տարածաշրջանի Արգինա համայնքի օրգանական այգիների համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01503283) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բարվա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05304834) 2012 թվականի ապրիլի 23-ին կնքված՝ N Շ12/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հակակարկտային ակուստիկական հեռակառավարվող կայանի պատրաստում, տեղադրում և մեկ տարվա սպասարկում՝ 4200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության
վարչության նախագահ Հ. Մինասյանի կողմից
21 մայիսի 2012թ.

«ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2012թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ

«Հակակարկտային ZENIT կայանքի տեղադրում Բաղրամյանի տարածաշրջանի Արգինա համայնքի օրգանական այգիների համար»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է հակակարկտային ZENIT կայանքի տեղադրման միջոցով նպաստել օրգանական այգիների բերքի պահպանությանը: Հակակարկտային ZENIT կայանքները անվտանգ են շրջակա միջավայրի համար և արդյունավետ են կիրառության մեջ:<br>Հակակարկտային կայանքի տեղադրումը նպատակ է հետապնդում նպաստել Արգինա գյուղի համայնքային 100 հա օրգանական այգիների բերքի և ծառերի պահպանությանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ |
| 3. | Բարեգործը | 1. Գերմանիայի Ավետարանչական Եկեղեցիների ընկերակցություն (EED), հասցեն՝ Mittelstr. 37 – D-53175 Bonn, Germany |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն, հասցեն՝ Նալբանդյան 110, հեռ.567031, ՀՎՀՀ՝ 01503283 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արմավիրի մարզ, Բաղրամյանի տարածաշրջան, գ. Արգինա - գյուղատնտեսական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 4,300,000 ՀՀ դրամ, (2012թ. ապրիլի 23-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառու է հանդիսանում ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյանի տարածաշրջանի Արգինա համանքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ. ապրիլի 23-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2012թ. ընթացքում Արգինա համայնքի այգիների վարչական տարածքում կտեղադրվի տեղական արտադրության Zenit հակակարկտային սարք, որը կտեղադրվի "Բարվա" ՍՊԸ-ի կողմից: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք է բերվում Zenit հակակարկտային կայանքը, որը բաղկացած է մետաղական կարկասից, գազասրսկիչ հարվածային ալիքների գեներատորից, բռնկիչից, էլեկտրական կարգավորիչից, 1 արևային մարտկոցի սնուցիչից, շանթարգելից, անթել հեռակառավարման սարքից, 12 հատ մետաղական գլանանոթներից՝յուրաքանչյուրը լիցքավորված 20 կգ գազով (համաձայն արտադրողի կողմից ներկայացված ցանկի), որի արժեքն է 4,200,000 դրամ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Zenit հակակարկտային կայանքը աշխատում է բջջային հեռախոսից ստացվող հրահանգներով՝ կարճ հաղորդագրության տեսքով: Հակակարկտային կայանքի շահագործման համար «Շեն» ԲՀԿ կողմից կընտրվեն Արգինա համայնքից 2 պատասխանատուներ, որոնց ամար ձեռք կբերվեն բջջային հեռախոսներ և քարտեր, ինչպես նաև կուսուցանվեն հրահանգավորման վերաբերյալ: Արժեքը 100,000 ՀՀ դրամ: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Շեն» ԲՀԿ առաջարկվող ծրագրի իրականացման ընթացքում համագործակցելու է Արգինա համայնքի գյուղապետարանի, համայնքի նախաձեռնող խմբի, "Բարվա" ՍՊԸ և ՀՀ ԱԻՆ հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • «Շեն» կազմակերպության լիազորված ներկայացուցիչները պարբերաբար պետք է այցելություններ կատարեն ծրագրի իրագործման վայր՝ աշխատանքների ընթացքը ստուգելու համար:<br>• Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհատու կազմակերպությունը կիրականացնի ծրագրերի անկախ վերահսկում:<br>• Համաձայն ընդունված կարգի պարբերական հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ - 365 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԲԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԲԸ-ԻՆ ԲՈՒԺՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ-ՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 11-ի 3/3.8-1/6212-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մայիսի 14-ի N 02/2836-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մայիսի 10-ի N ՀՔ/22/4325-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 8-ի N 3/3-6/4238-12 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի մայիսի 14-ի N 01/1997-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայ ավստրիական բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 371110 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ին բուժսարքավորումների տրամադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայ ավստրիական բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բուժսարքավորումները (365610 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5500 եվրո, ցանկը կցվում է, «Շիրակ» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. «Հայ ավստրիական բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
<<Հայ Ավստրիական Բարեգործական Կենտրոն>>
ՀԿ-ի նախագահ՝ Ա. ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻ կողմից
_______ «_25_» մայիսի 2012 թվ.

# ԾՐԱԳԻՐ

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ին բուժսարքավորումներ տրամադրում

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է հնարավորություն ունենալ ժամանակակից եվրոպական չափանիշներին համապատասխան 30 մահճակալ ծավալով ծննդօգնության և գինեկոլոգիայի բաժանմունք |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Ամբողջ ծրագիրը ֆինանսավորվում է «Գյումրիու Ավստրիական մանկական հիվանդանոցին օժանդակող միություն» ՀԿ-ի կողմից: Հասցեն՝ A – 3270, Ավստրիա, ք. Վիեննա, Շմելցերկասսե 19 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն իրականացվում է «Հայ Ավստրիական բարեգործական կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ ՀՎՀՀ՝ 05533442 իրավաբանական հասցեն՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհ 5 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ , Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ. Նժդեհ 5, բնագավառը՝ առողջապահական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 371110 եվրոին համարժեք դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012 թ. մայիսի 15-ից մինչև 2012 թ. դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ա) Բեռի ստացում և մաքսային ձևակերպում – մայիս-հունիս 2012թվ<br>գ) Բեռի անհատույց հանձնում «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ – ին |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ներմուծվում են բժշկական սարքավորումներ և պարագաներ՝ 365610 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 5500 եվրոյին համարժեք դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ Առողջապահության նախարարության և Շիրակի մարզպետարանի հետ համագործակցությամբ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացքը վերահսկվում է ծրագիրը ֆինանսավորող կազմակերպության կողմից, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություն է ներկայացվելու ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

AORI-Nr: ATEOS1000042194


## Verein zur Untersteutzung des Oesterreichischen kinderspitals in Gjumri/Armenien

Austrian Association for the benefit of the Children's hospital in Gyumri/Armenia

Donaufelderstrasse 81/12
1219 Wien
hansdoeller@aon.at
www.oe-kiderspital.at


Armenian-Austrian Charitable Center
(Armenisch-Oesterreichisches Wohltaetigkeitszentum)
Gyumri,garegin Nschdeh 5
3205 Gyumri,Armenia

### Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոցին տրամադրվելիք գործիքների ցանկ

| Քանակ | Articles | Քանակ | Արժեք |
|---|---|---|---|
| Չափահաս հիվանդի մահճակալ | beds for adults | 13 | 19.500,00 |
| Նորածնային մահճակալներ | beds for babies | 4 | 2.800,00 |
| Մանկական մահճակալներ | beds for children | 5 | 2.500,00 |
| Հիվանդի պահարան հարմարեցված սեղանով | Occasional board with table | 13 | 4.550,00 |
| Մանկաբարձական սեղան | delivery bed | 1 | 20.000,00 |
| Մանկական կշեռք | baby scale | 7 | 5.100,00 |
| Համակարգչային մոնիտոր | PC-monitors | 25 | 7.500,00 |
| Հիվանդին տաքացնող սարքավորում | Heater | 1 | 1.200,00 |
| Վիրակապական սեղան | Dressing/bandage trolley | 4 | 6.200,00 |
| Գինեկոլոգիական վիրահատական սեղան | Gyn. Operation table | 1 | 40.000,00 |
| Բուժ գործիքների շարժական սեղանիկ | trolley for instruments | 3 | 900,00 |
| Աթոռներ հիվանդների համար | chair for visitor/father | 4 | 400,00 |
| Բժշկի աթոռ | doctors chair | 1 | 150,00 |
| Ինֆուզիոն շարժական շտատիվ | mobile mounting for infusion | 4 | 200,00 |
| Վակուում էքստրակտոր | vacuum extractor | 1 | 1.000,00 |
| Բուժ պարագաների սեղան | table for instruments | 2 | 1.000,00 |
| Շարժասայլակ | wheelchair | 1 | 300,00 |
| Արհեստական շնչառության ապարատ | Respiration tool | 1 | 20.800,00 |
| Նորածնային Կյուվեզ Դրեգեր | Incubators Drager | 2 | 24.000,00 |
| Նորածնային ռեանիմացիոն կոմպլեքս Babytherm 4200 Drager | Babytherm 4200 Drager | 1 | 15.000,00 |
| Գինեկոլոգիական հետազոտման բազկաթոռ | Examination bed | 3 | 3.000.00 |
| Ուլտրաձայնային հետ.ապ. սև-սպիտակ | Ultrasound, black an white | 1 | 16.000,00 |
| Ուլտրաձայնային հետ.ապարատ գունավոր-դոպլեր | Ultrasound, colour doppler | 1 | 20.000,00 |
| Սառնարան արյան պրեպարատների համար | Blood refrigerator | 1 | 11.000,00 |
| Գինեկոլոգիական հետազոտման աթոռ | Gyn. Examination chair | 1 | 12.000,00 |
| Ինֆուզիոն ներ/երակային պոմպ | Pump for infusion | 34 | 40.800,00 |
| Ներարկման պոմպ | Pump for injection | 29 | 7.250,00 |
| Կարդիոտոկոգրաֆ-պտղի մոնիտոր | Cardiotokograph | 1 | 12.500.00 |
| Պերֆուզոր Բրաուն | Braun Perfusor | 2 | 1960,00 |
| Սրսկման պոմպ բրաուն | Braun pump for infusions | 2 | 2000,00 |
| Մոնիտոր դատեքս | Datex monitor | 4 | 16.000,00 |
| Պուլսօքսիմետեր | pulsoxymeter | 1 | 4.000,00 |
| Մոնիտորներ պացիենտների համար Սփեյս Լաբ | Monitor for patients Space Lab | 2 | 6.000,00 |
| Մոնիտոր հիվանդի համար | Monitor for patients | 3 | 18.000,00 |
| ԷՍԳ ապարատ | EKG-apparatus | 1 | 6.000,00 |
| Դեֆիբրիլյատոր | Defibrillator | 1 | 2.500,00 |
| Ասպիրատոր Վակում Պոմպ | Vacuum pump | 1 | 5.500,00 |
| **Բուժ պարագաներ** | **Accessories:** | | |
| Զոնդ սոնոգրաֆիկ ապարատի համար | | 1 | |
| | | 1 | |
| Սենսորներ Պուլսօքսիմետրի համար | | 1 | |
| Կապի միջոցներ | | 4 | |
| Լիցքավորման սարքավորումներ | | 2 | |
| | | 7 | |
| Գլխի սենսորներ | | 22 | |
| Պուլսսենսորնոր | | 6 | |
| Մանժետներ | | 10 | |
| Էկտո 2 մոդուլ | | 1 | |
| ԷՍԳ ապարատի լարեր | | 9 | |
| CO2 սենսոր լար | | 1 | |
| Թեզերվային փականներ MPV | | 1 | |
| Միացման լար | | 1 | |
| Ջերմաստիճանային սենսոր | | 1 | |
| Ռեգերվ մոդուլ նախատեսված Սփեյս լարի համար | | 27 | |
| Տպիչ նախատեսված Սփեյս լարի համար | | 1 | |
| Տպիչ սարքավորման թղթի փաթաթան | | 25 | |
| Մանկական կշեռքի պատյան | | 1 | |
| Մարտկոցներ | | 14 | |
| Ռադեցույց շահագործման վերաբերյալ | | 14 | |
| Ընդամենը բուժ պարագաներ | | | 8.000,00 |
| **Ընդամենը** | | | **€ 365.610,00** |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 մայիսի 2012 թվականի N Մ- 366 -Ա**

**քաղ. Երևան**

## «ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 23-ի N 3/8-1/3554-12 և մայիսի 8-ի N 3/8-1/5940-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի 27-ի N 02/1843-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի մարտի 22-ի N ՖԲ/ԱնՄ-5/1946- 12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի մարտի 21-ի N 03/07-1/2808-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 21-ի N ԱԱ/3-4/2342 -12 և 2012 թվականի մայիսի 7-ի N 2A2A-4815-B042 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի մարտի 23-ի N 101/104.3/1607-12 եզրակացությունները,* ***ո ր ո - շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 331050000 դրամ արժեքով ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից (ՀՀ, ք. Տաշիր, Գրիբոյեդովի 50ա, ՀՎՀՀ՝ 07204063) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2011 թվականի հունիսի 15-ին կնքված N 000611 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2011 թվականի մայիսի 14-ին կնքված N04505118881 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազի մատակարարում՝ 4800000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Հյուսիս-արևմտյան» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2012 թվականի հունվարի 12-ին կնքված N 134884736 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2011 թվականի հունիսի 22-ին կնքված՝ N 114720142 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1284000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2011 թվականի փետրվարի 18-ին կնքված՝ N 202829 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ինտերնետային ծառայությունների մատուցում՝ 216000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Խանում Գրիգորյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 66839125) 2012 թվականի հունվարի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սննդամթերքի մատակարարում՝ 7560000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ՄԱԳ-Էլեկտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07203241) 2012 թվականի մարտի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 16540570 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
« Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն » հիմնադրամի
Մեծավորուհի Զարուհի ( [illegible]ինթա)
[illegible]ից

«25» [illegible]րիլ 201[illegible]

« ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱ[illegible]
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Կրթահամալիրում անվճար պահում և դաստիարակում ենք Տաշիր քաղաքի 6-18 տարեկան միակողմանի և երկկողմանի որբ մոտ 30 երեխաների ու պատանիների՝ անկախ նրանց կրոնական պատկանելիությունից: Երեխաները հաճախում են պետական դպրոցներ, ապա վերադառնում են կրթահամալիր: Ինչպես նաև աջակցություն աղքատության մեջ գտնվող սոցիալապես անապահով ընտանիքներին, միայնակ և կարիքավոր ծերերին, զոհված ազատամարտիկների երեխաներին:<br>• Սոցիալական ծառայություններ:<br>• Հոգեբանական ծառայություններ, հոգեբանական աջակցության կազմակերպում, անհատական և խմբային թերապիաներ:<br>• Բժշկական ծառայություններ՝ակնաբուժի, ատամնաբուժի՝ բժշկական վերահսկողություն:<br>• Կրթական ծառայություններ՝ կենտրոնի երեխաների համար անվճար դասընթացների կազմակերպում՝հայ եկեղեցու պատմության, կրոնի, մաթեմատիկայի, հայոց լեզվի, ռուսաց լեզվի, անգլերենի, ֆրանսերենի, համակարգչի, երգ երաժշտության, պարի և ասեղնագործության:<br>• 6-18 տարեկան երեխաների ու պատանիների ամառային հանգստի կազմակերպում ամառային բակային ճամբարում:<br>• Պատմամշակութային արժեքների հետ շփում, ամիսը մեկ անգամ սպորտային և մշակութային ծրագրերի կազմակերպում:<br>• Քանի որ «Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամի շենքային պայմանները բավարար չեն երեխաների համար, անհրաժեշտություն կա կենտրոնի տարածքում նոր կառույցների. Որպեսզի կարողանանք նորմալ պայմաններում իրագործել մեր ծրագրի հիմնական նպատակները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորում է.<br>1. «Ալիանս Արմենի»բարեգործական հիմնադրամի կողմից, որից ակնկալում ենք տարեկան 10 միլիոն 400 հազար դրամ երեք տարվա համար 31 միլիոն 200 հազար դրամ օգնություն:<br>2. «Ռենովաբիս »կազմակերպության կողմից, որից ակնկալում ենք տարեկան 22 միլիոն 533.4 հազար դրամ երեք տարվա համար, 67միլիոն 600 հազար դրամ, օգնություն:<br>3. «ԱՄՆ-ի և Կանադայի Կաթողիկե Առաջնորդարան»-ի կողմից ակնկալում ենք 7 միլիոն 700 հազար դրամ տարեկան, երեք տարվա համար՝ 23միլիոն 100հազար դրամ օգնություն:<br>4. « ԱՄՆ-ի Վահե Դոմպալաքյան»-ի կողմից ակնկալում ենք 3 միլիոն 850 հազար դրամ մեկ տարվա համար, երեք տարվա համար՝ 11 միլիոն 550 հազար դրամ օգնություն: Այսպիսով՝տարեկան ընդամենը 44միլիոն 483 հազար 400 դրամ, իսկ երեք տարվա համար՝ 133 միլիոն 450 հազար դրամ ֆինանսական օգնություն: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն իրականացնող է հանդիսանում «Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամը *(հասցե՝ Տաշիր, Գրիբոյեդովի փ 50 ա ; ՀՎՀՀ 07204063)*. |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայր է ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքը: Ծրագրի ուղղվածությունը կրթական, սոցիալական և առողջապահական է: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի արժեքն է 1 տարվա կտրվածքով՝ մոտ 44 միլիոն 483 հազար 400 դրամ , երեք տարվա՝2012-2014թթ. համար մոտ 133 միլիոն 450 հազար դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրում ընդգրկված են 6-18 տարեկան մոտ 30 երեխաներ ու պատանիներ, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող ընտանիքներում, կամ միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ են: Ինչպես նաև ծրագրի շահառուներ են Տաշիրի շրջանի, անապահով ընտանիքները, որոնց ցուցակները կազմվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին՝ ընտանիքների սոցիալական նկարագիրների մանրամասն ուսումնասիրությունների հիման վրա: Ընդհանուր առմամբ, ծրագրի |

| | | |
|---|---|---|
| | | շահառուներն են հանդիսանում 950-ից ավելի ընտանիքներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է և իրականացվում է 2011-թվականից սկսած, այժմ որակավորման է ներկայացվում 2012-2014 թվականներին իրականացվելիք ծրագիրը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | • Սոցիալական ծառայությունը իրականացվում է քույրերի կողմից(այցելություններ անապահով ընտանիքների):<br>• Հոգեբանական ծառայություններ, հոգեբանական աջակ-ցության կազմակերպում, առայժմս իրականացվում է քույրերի կողմից:<br>• Բժշկական ծառայություններ՝ակնաբուժի, ատամնաբուժի՝ բժշկական վերահսկողություն, որը իրականացվում է Տաշիրի մանկական պոլիկլինիկան<br>• Կենտրոն հաճախող երեխաների վիտամիններով և հանքային նյութերով հարուստ տաք սննդի մատուցում օրը 1 անգամ: Մեկ երեխայի սննդի օրական արժեքը կազմում է 400 դրամ: Տարեկան սննդի ծախսը կազմում է մոտ 2.520.000 դրամ և մոտ 7.560.000 դրամ 3 տարվա համար:<br>• Դպրոցահասակ երեխաների դպրոցական տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո: Երեխաներին գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում: Մեկ երեխայի հաշվով գրենական պիտույքների արժեքը ամսական կազմում է մոտ 1500-1800 դրամ: Տարեկան գրենական պիտույքների ծախսը կազմում է մոտ 600.000 դրամ և 1.800.000 դրամ 3 տարվա համար:<br>• Երեխաների բնականոն կենցաղի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական պարագաներ, տարեկան մոտ 550.000 դրամ և մոտ 1.650.000 դրամ 3 տարվա համար:<br>• Դեղորայք տարեկան մոտ 300.000դրամ և մոտ 900.000 դրամ 3 տարվա համար:<br>• Պատմամշակութային արժեքների հետ շփում, ամիսը մեկ անգամ,սպորտային և մշակութային ծրագրերի կազմակերպում, տարեկան 1.204.700դրամ և մոտ 3.614.000դրամ 3տարվա համար:<br>• «Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամի շենքի շահագործման և կոմունալ - կենցաղային ծախսերը տարեկան մոտ 2.520.000 դրամ, այդ թվում՝<br>- Էլեկտրականության համար 500.000 դրամ:<br>- Ջրամատակ.և ջրահեռացման համար տարեկան 200.000 դրամ:<br>- Գազի համար տարեկան մոտ 1.420.000 դրամ:<br>- Հեռախոսակապի , ինտերնետի համար տարեկան մոտ 400.000դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | • Շինարարական աշխատանքներ 98 միլիոն 800 հազար դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարա-գիրը, ծավալները և նախատեսվող գինը | Այս ծրագրի շրջանակներում Տաշիրի դաստիարակության կենտրոնում ծախսվում է՝ տարեկան մոտ 44.483.400 դրամ և 133.450.000դրամ 3 տարվա համար: Որից՝<br>- Էլեկտրականության համար տարեկան մոտ 500.000 դրամ կամ 1.500.000 դրամ 3 տարվա համար:<br>- Ջրամատակարարման և ջրահեռացման համար տարեկան մոտ 200.000 դրամ և 600.000 դրամ 3 տարվա համար:<br>- Գազի համար տարեկան մոտ 1.420.000 դրամ և 4.260.000 դրամ երեք տարվա համար:<br>- Հեռախոսակապի , ինտերնետի համար տարեկան մոտ 400.000 դրամ և 1.200.000 դրամ երեք տարվա համար:<br>- Սննդի համար տարեկան մոտ 2.520.000 դրամ և 7.560.000 դրամ 3 տարվա համար :<br>- Տնտեսական ապրանքների համար տարեկան մոտ 550.000 դրամ (մնացած անհրաժեշտ տնտեսական ապրանքները ուղարկում են բարերարները) և 1.650.000 դրամ 3 տարվա համար:<br>- Գրենական պիտույքների համար տարեկան մոտ 600.000 դրամ (մնացած անհրաժեշտ գրենական պիտույքները ուղարկում են բարերարները ) և 1.800.000 դրամ երեք տարվա համար:<br>- Պատմամշակութային արժեքների հետ շփում(շրջագայություններ ) Տարեկան 1.204.700դրամ, երեք տարվա համար 3.614.000դրամ:<br>- Գույքի ձեռք բերման ծախսեր տարեկան 3.410.500դրամ երեք տարվա համար 10.231.500դրամ:<br>• Քանի որ «Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամի շենքային պայմանները բավարար չեն երեխաների համար, անհրաժեշտություն կա կենտրոնի տարածքում նոր կառույցների. Որպեսզի կարողանանք նորմալ պայմաններում իրագործել մեր ծրագրի հիմնական նպատակները: Շենքի կառուցապատման համար տարեկան արժեքը կազմում է միջինը մոտ 98.800.000 դրամ 2012-2013թ. Որից՝ այդ թվում՝ պահակատուն 5.667.700 դրամ, խաղահրապարակ 4.708.200 դրամ, սանհանգույց 3.712.700 դրամ, տաղավարներ 12.260.000 դրամ, դասասենյակներ և դահլիճ 72.451.400 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմա-կերպչական ծախ-սերը | Ծրագիրը նախատեսում է տարեկան 444.800դրամ երեք տարվա համար 1.334.500 դրամ կազմակերպչական ծախսեր. «հեռախոսակապի, էլեկտրաէներգիայի, ջրի և այլ ծախսերի համար, որը նախատեսվելու է քույրերի և կամավորների անձնական կարիքների համար և կազմում է ծրագրի բյուջեի մեկ %-ը. |
| | | |
| 12 | Համագործակցու-թյունը պետական կառավարման, տեղական ինքնա-կառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ շահառուների ցուցակների ճշտման կապակցությամբ, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի. ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության նախարարությունների և ՀՀ Լոռու մարզպետարանի և տեղական կառավարման մարմինների հետ: |
| | | |
| 13 | Ծրագրի արդյու-նավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք պետք է ներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Սահմանված կարգով ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի տեղեկատվություն Իրականացվող ծրագրերի վերաբերյալ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ- 367 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 24-ի N 3/8-1/3600-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի 26-ի N 02/1832-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի մարտի 22-ի N ՖԲ/ԱնՄ-5/1947-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 21-ի N ԱԱ/3-4/2340-12 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի մարտի 23-ի N 101/104.3/1604 -12 եզրակացությունները,* ***ո ր ո -շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 210000000 դրամ արժեքով «Աջակցություն անապահով ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
« Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամի
Մեծավորուհի Զարուհի Քույր Հակինթա
Ծիրանյանի կողմից

«25»Ապրիլ 2012թ.

07204063

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ»

ԾՐԱԳԻՐ

7/6

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ակնկալվող բարեգործական բեռների ընդունում և անհատույց բաշխում Լոռու մարզի անապահով ընտանիքներին: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Կորիզյան Ժան»Ֆրանսիա-25 միլիոն դրամ տարեկան,երեք տարվա համար ակնկալվում է 75 միլիոն դրամ օգնություն. «Կորիզյան Արթուր »Ֆրանսիա-25 միլիոն դրամ տարեկան,երեք տարվա համար ակնկալվում է 75 միլիոն դրամ օգնություն. «Ճենտերեճյան Ժան»Ֆրանսիա-20 միլիոն դրամ տարեկան, երեք տարվա համար ակնկալվում է 60 միլիոն դրամ օգնություն. Ընդամենը՝ տարեկան 70 միլիոն դրամ, երեք տարվա համար 210 միլիոն դրամ: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնող է հանդիսանում «Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամ-ը (հասցե՝ Ք. Տաշիր Գրիբոյեդովի 50-ա; ՀՎՀՀ 07204063): |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայր է հանդիսանում ՀՀ Լոռու Մարզը: Ծրագիրն առնչվում է սոցիալական բնագավառին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Այս ծրագրի շրջանակներում տարեկան ակնկալվում է մոտ 70.000.000 դրամի բարեգործական բեռ, 3 տարվա համար, մոտ 210.000.000 դրամի բարեգործական բեռ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառու են Հայաստանի Լոռու մարզի, անապահով ընտանիքները, որոնց ցուցակները կազմվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին՝ ընտանիքների սոցիալական նկարագրերի մանրամասն ուսումնասիրությունների հիման վրա: Ծրագրի շահառուներն են հանդիսանում տարեկան մոտ 950-ից ավելի ընտանիքներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է և իրականացվում է 2011 թվականից, այժմ որակավորման է ներկայացնում 2012-2014 թվականներին իրականացվելիք ծրագիրը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սոցիալապես անապահով ընտանիքների ցուցակների կազմում և ճշտում. բարեգործական բեռների ընդունում.2012-2014թթ. բարեգործական բեռների տեսակավորում. 2012-2014թթ. բարեգործական բեռների բաշխում: 2012-2014թթ. |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Այս ծրագրի շրջանակներում ակնկալվող՝տարեկան 70 միլիոն դրամի և երեք տարվա՝ 2012-2014 թ. համար մոտ 210.000.000 դրամի բարեգործական բեռը, ուղարկելու են բարերարները: Սննդեղեն, հագուստ, կոշիկեղեն, գրենական և տնտեսական պիտույքներ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ շահառուների ցուցակների ճշտման կապակցությամբ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից:Այդ նպատակով նրանք պետք է ներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Սահմանված կարգով ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի տեղեկատվություն իրականացվող ծրագրերի վերաբերյալ: |

7/6

07204063

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ- 368 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ» ԱՄԱՌԱՅԻՆ ԲԱԿԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 27-ի N 3/8-1/5518-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի 27-ի N 02/1842-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի մարտի 22-ի N ՖԲ/ԱնՄ-5/1948-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի մարտի 21-ի N 03/07-1/2809-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 21-ի N ԱԱ/3-4/2341-12 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի մարտի 23-ի N 101/104.3/1602 -12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 12144000 դրամ արժեքով «Սուրբ Աստվածածին» ամառային բակային ճամբարի կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

« Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամի

Մեծավորուհի՝ Զարուհի (քույր Հակինթա) Միրամանի ն...ից

«16» ... 2012թ.

«Սուրբ Աստվածածին» ամառային բակային ճամբարի կազմակերպում.

Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Յուրաքանչյուր տարի «Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամի տարածքում՝ ամառային բակային ճամբարում, որոք ինքրով հանգստանում, միաժամանակ՝ կրթվում և դաստիարակվում են անապահով ընտանիքների մոտ 500 երեխա, Տաշիր քաղաքից և շրջակա գյուղերից: Ակտիվ հանգստի հետ երեխաները ուսանում են կրոնի պատմություն, երգ, համակարգիչ, նկարչություն, ձեռագործ, օտար լեզուներ, ինչպես նաև մասնակցում են սպորտլանդիաների, զվարճալի և ինտելեկտուալ խաղերի: Կազմակերպվում են շրջագայություններ դեպի Սևան, Խոր-վիրապ, Մատենադարան, Լոռի-Բերդ, Դենդրոպարկ այգի և պատմամշակութային այլ վայրեր: Ճամբարի ընթացքում երեխաներին բաժանվելու են անվճար գրենական պիտույքներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ամբողջ ծրագիրը հիմնականում ֆինանսավորում են՝<br>1. «ԱՄՆ-ից Տեր և Տիկին՝ Տոմպալաքյան» 3 միլիոն 855 հազար դրամ<br>2. «ԱՄՆ-ի և Կանադա-ի Առաջնորդարան» 2 միլիոն 535 հազար դրամ |
| 4 | Ծրագիրը Կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում «Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամը.<br>(հասցե՝ Ք. Տաշիր Գրիբոյեդովի 50-ա ՀՎՀՀ 07204063): |
| 5 | Ծրագրի Իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Լոռու մարզի «Տիրամայր Հայաստանի Դաստիարակության Կենտրոն» հիմնադրամ-ի տարածքում: Ծրագիրն առնչվում է սոցիալական և կրթական ոլորտներին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Բուն ճամբարի իրականացման փուլ՝ հունիս-օգոստոս ամիսների ընթացքում ծախսվում է մոտ 2.130.000 դրամ և 6.390.000 դրամ՝ 3 տարվա 2012-2014թթ.համար: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ամեն տարի ծրագրից կօգտվեն Լոռու մարզի Տաշիր քաղաքի և շրջակա գյուղերի անապահով ընտանիքների 6-18 տարեկան 500 երեխա՝ անկախ կրոնական պատկանելիությունից: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է, այժմ որակավորման է ներկայացվում 2012-2014թվականներին իրականացվելիք ծրագիրը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունընժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.<br>❖ Ճամբարի շահագործման և կոմունալ-կենցաղային ծախսեր, տարեկան 630.000 դրամ, երեք տարվա՝ 2012-2014թթ. համար մոտ 1.890.000 դրամ:<br>❖ Ճամբարի իրականացման համար անհրաժեշտ սննդի,դեղորայք և հիգենիկ պարագաների, գրենական պիտույքների և այլ ծախսեր տարեկան մոտ 1.500.000 դրամ, այդ թվում տարեկան՝ սնունդ-1.000.000դրամ, երեք տարվա համար- 3.000.000դրամ, գրենական պիտույքներ-300.000դրամ, երեք տարվա համար 900.000դրամ, հիգենիկ պարագաներ-200.000դրամ, երեք տարվա համար 600.000դրամ: 2012-2014թթ. համար մոտ 4.500.000 դրամ:<br>❖ Ընդամենը միասին տարեկան՝ 2.130.000 դրամ, երեք տարվա՝ 2012-2014թթ. 6.390.000 դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում՝ կոմունալ ծախսերը իրականացվելու են.<br>➢ Գազ, տարեկան ծախսվում է մոտ 300.000 դրամ երեք տարվա 900.000 դրամ:<br>➢ Էլեկտրաէներգիա, տարեկան ծախսվում է 150.000 դրամ երեք տարվա համար՝ մոտ 450.000 դրամ:<br>➢ Ջուր, տարեկան ծախսվում է մոտ 80.000 դրամ երեք տարվա համար 240.000 դրամ:<br>➢ Հեռախոսակապի և ինտերնետ ծառայությունների տարեկան ծախսվում է մոտ 100.000 դրամ՝ երեք տարվար համար մոտ 300.000 դրամ:<br>➢ Դեղորայք և հիգենիկ պարագաներ ինչպես նաև գրենական պիտույքներ տարեկան ծախսվում են մոտ 500.000 դրամ (մնացածը ուղարկում են բարերարները), երեք տարվա՝ համար մոտ 1.500.000դրամ:<br>➢ Սննդամթերք տարեկան մոտ 1.000.000 դրամ երեք տարվա համար մոտ 3.000.000 դրամ : |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Հեռախոսակապի , ինտերնետի համար տարեկան մոտ 100.000 դրամ և 300.000 դրամ 3 տարվա համար: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Լոռու մարզպետարանի և Տաշիրի քաղաքապետարանի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք պետք է ներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Սահմանված կարգով ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի տեղեկատվություն իրականացվող ծրագրերի վերաբերյալ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ - 369 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-477-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 11-ի N 3/3.8-1/6210-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 7-ի N ԱԱ/3-4/4127-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հիմնարար գիտական գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հիմնարար գիտական գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Ցանցային միջավայրում աշխատող թվային բովանդակության ձևավորման կենտրոնի ստեղծում» N Մ-477-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԼԱՆՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00019333) 2012 թվականի ապրիլի 27-ին կնքված՝ N 27/04-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ 5880893.76 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ- 370 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 11-ի N 3/3.8-1/6174-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 8-ի N ԱԱ/3-4/4229-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00441423) 2012 թվականի ապրիլի 25-ին կնքված՝ N 28 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մասնաշենքի արտաքին ճակատների հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 35580000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ- 371 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 10-ի N 3/3.8-1/6087-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 11-ի N ԱԱ/3-4/4332-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հատուկէլեկտրամոնտաժ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00407927) 2012 թվականի մայիսի 2-ին կնքված՝ N 29/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման համար մալուխների ձեռքբերում՝ 742500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ- 372 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 2)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 16-ի N 3/3.8-1/6480-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 15-ի N ԱԱ/3-4/4551-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մետաղ-դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01239878) 2012 թվականի մայիսի 2-ին կնքված՝ N 30 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական պատրաստվածքների պատրաստում և տեղադրում՝ 2235000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ- 373 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 3)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 18-ի N 3/3.8-1/6596-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 16-ի N ԱԱ/3-4/4618-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պոժտեխնիկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01013653) 2012 թվականի մայիսի 11-ին կնքված՝ N 31/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հավելվածում նշված ապրանքների մատակարարում՝ 816500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**18 մայիսի 2012 թվականի N Մ - 374 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-168-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 3-ի N 3/3.8-1/5762-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 2-ի N ԱԱ/3-4/3900-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրգանական բանջարեղենի մշակության փորձացուցադրական ուսումնական կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-168-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գարիկ Մնացականյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 43053135) 2012 թվականի ապրիլի 25-ին կնքված՝ N 02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական կոնստրուկցիայով բետոնե հենասյուների պատրաստում՝ 910000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ - 375 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 18-ի 3/3.8-1/6597-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մայիսի 16-ի N 02/2890-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 16-ի N 3/3-4/4617-12 եզրակացություն-ները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 5596300 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի մշակույթի տան մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2012 թվականի մայիսի 10-ին կնքված՝ N ԼՂ-Կ-07/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստում, գնում, տեղափոխում և տեղադրում՝ 5596300 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական

հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«14» մայիսի 2012թ.

«ԼՂՀ Շուշի քաղաքի մշակույթի տան մասնակի կահավորում »

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մասամբ ապահովել Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի մշակույթի տունը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղ, Շուշի, մշակույթի բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 5.596.300,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ԼՂՀ Շուշի քաղաքի բնակչությունը |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ մայիսի 14-ից մինչեւ 2012թ. օգոստոսի 14-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված N1-ի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում (ցանկը կցվում է)՝ 5.596.300,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ- 376 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 16-ի N 3/3.8-1/6481-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 15-ի N ԱԱ/3-4/4557-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» N Մ-120-Ա որոշմամբ (2012 թվականի մարտի 14-ի N Մ-161-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սամօջախ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08414357) 2012 թվականի ապրիլի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների ձեռքբերում՝ 4500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**21 մայիսի 2012 թվականի N Մ - 377 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի մայիսի 18-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N Մ-059-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 21–ի N 3/3.8-1/6670-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի 11-ի N ԱԱ/3-4/6208-12 եզրակացությունները* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի N Մ-059-Ա որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ծրագրի 5-րդ կետում «150000000 դրամ» բառերը փոխարինել «350000000 դրամ» բառերով.

2) ծրագրի 9-րդ կետում «100502400 դրամ» բառերը փոխարինել «300502400 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01802388) 2012 թվականի ապրիլի 27-ին կնքված՝ N YBC/AAF/2012-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 50 շիշ «Նոյան տապան» տեսակի հուշանվերային կոնյակի ձեռքբերում՝ 41666666 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ- 378 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N Մ-060-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հաշվի առնելով «Հայաստանի մանուկներ հիմնադրամ»-ի գործադիր տնօրենի 2012 թվականի մայիսի 14-ի N 1797 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-935-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-060-Ա որոշման 2-րդ կետի 7-րդ ենթակետում «204000 դրամի չափով» բառերը փոխարինել «317500 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ- 379 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 21 27-ի N 3/3.8-1/3795-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 27-ի N ԱԱ/3-4/2570-12 եզրակացությունները ու հաշվի առնելով «Հայաստանի մանուկներ հիմնադրամ»-ի գործադիր տնօրենի 2012 թվականի մարտի 24-ի N 1755 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. Էյ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքի միջնակարգ զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի 9-րդ կետը լրացնել «Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել ամառային ճամբարներ համայնքների երեխաների համար» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2012 թվականի N Մ -380- Ա**
**քաղ. Երևան**

## «ԱՐՏԱՇԱՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 10-ի N 3/3.8-1/6055-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 8-ի N ԱԱ/3-4/4231-12, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2012 թվականի մայիսի 14-ի N1/3/1-1/2288-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Արտաշատ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 190930000 դրամ ընդհանուր արժողությամբ «Սուրբ Հովհաննես եկեղեցու կառուցման երրորդ փուլի և բարեկարգման» բարեգործական ծրագիրը» (կցվում է ):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Արտաշատ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մարտինս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04200555) 2011 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների և բարեկարգման համար՝ 190930000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Արտաշատ» բարեգործական հիմնադրամին նշված ծրագրի ավարտից հետո մեկամյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Մ. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Արտաշատ բարեգործական հիմնադրամի նախագահ՝
Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

# Ծ Ր Ա Գ Ի Ր

Արտաշատ քաղաքի «Ս. Հովհաննես» եկեղեցու կառուցման III փուլի և բարեկարգման

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայ առաքելական եկեղեցու համար հոգևոր օջախի կառուցում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններ ստանալը |
| 3 | Բարեգործը | "Արտաշատ" բարեգործականհիմնադրամ, Օգոստոսի 23 փող., շենք № 62 ՀՎՀՀ 04215002 Արտաշատի ՏԳԲ |
| 4 | Ծրագրի կատարողը | "Արտաշատ" բարեգործական հիմնադրամ |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք.Արտաշատ՝ հոգևոր դաստիարակչական |
| 6 | Ծրագրի բյուջեն | շուրջ 190930 /հարյուր իննսուն միլիոն ինը հարյուր երեսուն հազար / ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Հայ առաքելական եկեղեցու հավատացյալներ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ. Մարտի 30-ից մինչև 2013թ. Մարտի 30 |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2012-2013թթ. Օժանդակ շինությունների կառուցում, ցանկապատում և հողային աշխատանքներ՝<br>ա/ 30.03.12թ.-30.05.2012թ. հողային աշխ. շուրջ՝ 42428,9մլն. ՀՀ դրամ,<br>բ/ 30.03.2012-30.05.2012թ. ցանկապատում՝ 42428,9մլն. ՀՀ դրամ<br>գ/ 30.05.2012-30.09.2012թ. օժանդակ շին. և բարեկարգում՝ 42428,9մլն. ՀՀ դրամ<br>դ/ 30.09.2012թ.-30.03.2013թ. ասֆալտապատման աշխ.՝ 63643.3 մլն.ՀՀ դրամ |
| 10 | Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Շինարարություններն իրականացնող "Մարտինս" ՍՊԸ, ք.Արտաշատ, Ա.Բակունց 39, ՀՎՀՀ 04200555<br>"Հայէկոնոմ" բանկ Արտաշատի մասնաճյուղ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսերը | Չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | մարզպետարան, քաղաքապետարան |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության ծրագրերի համակարգման հանձնաժողով /հաշվետվությունների տեսքով/ |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ-381-Ա**
**քաղ. Երևան**

**NATO-Ն ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՔԻՄԻԱԿԱՆ, ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ, ՌԱԴԻՈԼՈԳԻԱԿԱՆ, ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՎ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՆԵՐՈՒՄ» ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 11-ի N 3/3.8-1/6211-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մայիսի 16-ի N 02/2905-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի մայիսի 14-ի N 03/07-1/4722-12, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2012 թվականի մայիսի 21-ի N 16/3644-12, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2012 թվականի մայիսի 17-ի N 1/08.1/1290-12, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության 2012 թվականի մայիսի 18-ի N 2/3/1-588-12, Հայաստանի Հանրապետության կառավարության Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2012 թվականի մայիսի 17-ի N 35/707-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 11-ի N ԱԱ/3-4/4395-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել NATO-ի կողմից հատկացված ARW 984378 դրամաշնորհի միջոցներով 2012 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 2-ը ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ 34000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «NATO-ն հանուն խաղաղության և անվտանգության ծրագրի շրջանակում անցկացվող «Տեխնոլոգիական նվաճումները, քիմիական, կենսաբանական, ռադիոլոգիական, միջուկային և պայթուցիկ նյութերի բարձր արդյունավետությամբ հայտնաբերման վնասազերծման և զարգացման ասպարեզներում» գիտաժողովի անցկացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հյուսիսատլանտյան դաշինք (ՆԱՏՕ)» կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝



«Երևան» հյուրանոց» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02533075) 2012 թվականի մայիսի 3-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գիտաժողովի անցկացման համար հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 8575200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» (Պոլիտեխնիկ) ՊՈԱԿ-ին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտաքին կապերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության կառավարության Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՊՃՀ ռեկտոր
Ա. Աստիսյանի կողմից
--------------------
........05........ 2012թ.

NATO-ն հանուն խաղաղության և անվտանգության ծրագրի շրջանակում անցկացվող
«Տեխնոլոգիական նվաճումները քիմիական, կենսաբանական, ռադիոլոգիական, միջուկային և պայթուցիկ նյութերի բարձր արդյունավետությամբ հայտնաբերման վնասազերծման և զարգացման ասպարեզներում» անվանումով գիտաժողովի

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | 1. Երևանում անցկացնել գիտաժողով աշխարհի 22 երկրների գիտնականների, երիտասարդ մասնագետների և քաղաքագետների մասնակցությամբ: 2. Ներկայացնել տեսական, գործնական և տեխնոլոգիական մշակումներ սենսորային զարգացումների վերաբերյալ, որոնք ուղված են քիմիական, կենսաբանական, օպտիկական և ռադիացիոն հնարավորություններով կենսաօբյեկտներում վնասակար նյութերի, թմրա և պայթուցիկ նյութերի հայտնաբերմանը: 3. Բացահայտել տեղեկատվության կոմպլեքս մշակման ալգորիթմներ, ինչը թույլ կտա իրականացնել բարդ համակարգային հսկողություն կենսական անհրաժեշտության օբյեկտներում: 4. Դիտարկել ահաբեկչության և տարերային աղետների դեմ պայքարի հնարավորություններ: 5. Ուշադրություն դարձնել տարբեր ոլորտներում աշխատող գիտնականների, տեխնոլոգների, ճարտարագետների, քաղաքագետների համագործակցությանը, որը թույլ կտա առաջադեմ գիտության հնարավորություններով կոմպլեքս եղանակներ մշակել ոչ ավանդական մարտահրավերներին դիմակայելու համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային |



| | | |
|---|---|---|
| | | արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | NATO-ն հանուն խաղաղության և անվտանգության դրամաշնորհային ծրագիր: NATO HQ Bd Leopold III B-1110 Բրյուսել, Բելգիա, ֆակս/էլեկտրոնային հասցե՝ +32 2 707 4232 / science@hq.nato.int |
| 4. | Ծրագիրը կատարողը | NATO: NATO-ի անդամ երկրից համազեկուցող՝ Աշոկ Վասեաշտա, դոկտոր, պրոֆեսոր: Նորվիչի կիրառական գիտահետազոտական ինստիտուտների համալսարան, Առաջատար գիտության և միջազգային համագործակցության և Մաքուր ջրային պաշարների ինստիտուտներ, ԱՄՆ - ի պետական Դեպարտամենտ, ԱՄՆ, Կոլումբիայի նահանգ. 13873 Կենտրոնական պարկ, Սուիտե 500 Հերենդոն,VA20171, ԱՄՆ: Հեռախոս/ֆակս/էլեկտրոնային հասցե՝+17039045766/+18776157335/avaseash@norwich.edu NATO-ին չանդամակցող երկրից համազեկուցող՝ Սուրիկ Խուդավերդյան, դոկտոր, պրոֆեսոր: Հայաստանի Պետական ճարտարագիտական համալսարան: Հայաստան, Երևան: Տերյան 105, 0009: Հեռախոս/ֆակս/էլեկտրոնային հասցե՝+37410 541-591/ +37410 541-591/ khsuren@seua.am |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք. Երևան, «Երևան Հյուրանոց»: Գիտական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 34000 Եվրոյին համարժեք դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետությունից և 22 արտերկրներից համաժողովի մասնակիցները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 28 սեպտեմբերի - 02 հոկտեմբերի 2012թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Տեխնոլոգիական նվաճումները քիմիական, կենսաբանական, ռադիոլոգիական, միջուկային և պայթուցիկ նյութերի բարձր արդյունավետությամբ հայտնաբերման վնասազերծման և զարգացման ասպարեզներում» անվանումով համաժողովը կանցկացվի 28.09.2012-02.10.2012թ. ժամանակահատվածում: Նշված ժամանակահատվածում գիտաժողովի մասնակիցների 1. սենյակների, 2. Նախաճաշի, 3. գիտաժողովի դահլիճի, 4. խորտիկների և 5. սուրճի ընդմիջման համար ընդամենը կվճարվի 8575200 դրամ՝ առանց ԱԱՀ – ի կամ 10290240 դրամ ԱԱՀ- ի հետ միասին: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Պայմանագիր է կնքվել «Երևան Հյուրանոց» ԲԲԸ - ի հետ (ՀՎՀՀ / Tax code 02533075, 03/05/2012), համաձայն որի գիտաժողովի անցկացման համար նախատեսվող ծառայությունների արժեքները հետևյալն են՝ 1. սենյակների համար՝ 7175200 դրամ առանց ավելացած արժեքի հարկի և 8610240 դրամ ավելացած արժեքի հարկով |

| | | |
|---|---|---|
| | | (ավելացած արժեքի հարկը կազմում է 1435040 դրամ), 2. նախաճաշի համար՝ 330000 դրամ առանց ավելացած արժեքի հարկի և 396000 դրամ ավելացած արժեքի հարկով (ավելացած արժեքի հարկը կազմում է 66000 դրամ), 3. գիտաժողովի դահլիճի համար՝ 350000 դրամ առանց ավելացած արժեքի հարկի և 420000 դրամ ավելացած արժեքի հարկով (ավելացած արժեքի հարկը կազմում է 70000 դրամ), 4. սուրճի ընդմիջումների համար՝ 600000 դրամ առանց ավելացած արժեքի հարկի և 720000 դրամ ավելացած արժեքի հարկով (ավելացած արժեքի հարկը կազմում է 120000 դրամ), 5. խորտիկների համար՝ 120000 դրամ առանց ավելացած արժեքի հարկի և 144000 դրամ ավելացած արժեքի հարկով (ավելացած արժեքի հարկը կազմում է 24000 դրամ): Ընդամենը կվճարվի 8575200 դրամ՝ առանց ԱԱՀ – ի կամ 10290240 դրամ ԱԱՀ- ի հետ միասին (ավելացած արժեքի հարկը կազմում է 1715040 դրամ): |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չկան |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման շրջանակում NATO-ն համագործակցում է ՀՀ Կրթ. Գիտ. նախարարության, «Հայաստանի Պետական ճարտարագիտական համալսարանի», «Երևանի պետական համալսարանի», ՀԱԱ «Մոլեկուլային կենսաբանության» ինստիտուտի և «Էկոնոմիկայի» նախարարության «Պլաստպոլիմեր» ինստիտուտի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | NATO-ին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ուղղված գիտական և ֆինանսական ամփոփ հաշվետվություն, գիտական նյութերի հրապարակում |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 մայիսի 2012 թվականի N Մ -** 382 **- Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի 27-ի N3/3.8-1/3794-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի 29-ի N02/1893-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի ապրիլի 26-ի N01/07-1/4183-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 27-ի NԱԱ/3-4/2567-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայ կրթություն» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 23498000 դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայ կրթություն» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01828432) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝01520882) 2010 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված N090051900108 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ապրիլի 1-ից 2014 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրական էներգիայի մատակարարում՝ 3175000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝02500052) 2011 թվականի սեպտեմբերի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է է 2012 թվականի ապրիլի 1-ից 2014 թվականի դեկտեմբերի 31-ը կապի ինտերնետի և դյուրակիր համակարգչի տրամադրում՝ 293000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝01555351) 2010 թվականի հոկտեմբերին կնքված N 5-14-51 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է է 2012 թվականի ապրիլի 1-ից 2014 թվականի դեկտեմբերի 31-ը խմելաջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայ կրթություն» կրթական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Հաստատում եմ՝
"Հայ Կրթություն" կրթական հիմնադրամի
Տնօրեն ՝ Հ. Գեղամյանի կողմից
«10» ապրիլի, 2012թ

# ՀԱՅ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կրթել և դաստիարակել երեխաներին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Ծրագրի շրջանակներում ակնկալում ենք օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն, ԱՄՆ, Նյու Ջերսի, Փարամուս, 31 Ուեսթ Սենչուրի Րոուդ - |
| 4. | Ծրագիրը կատարողը | " Հայ Կրթություն" կրթական հիմնադրամ - ՀՀ, Երևան , ՀԱ Ա -1 թղ. Օգանովի 20<br>ՀՎՀՀ՝ 01828432<br>«Հայ կրթություն» կրթական հիմնադրամը սկսել է իր գործունեությունը 2000թ. հոկտեմբերի 2-ից, համաձայն ՀՀ Հիմնադրամի պետական գրանցման թիվ 120 վկայականի և հիմք ընդունելով ՀՀ ԿԳՆ «Լիցենզավորման և հավատարմագրման ծառայության» գործակալության թիվ 438 և 439 հրամանները, լիցենզավորված կրթական ծրագրերի և մասնագիտությունների 05.02.01թ. թիվ 052 լիցենզիա |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը , բնագավառը | ՀՀ, Երևան , ՀԱ Ա -1 թղ. Օգանովի 20<br>Բնագավառը՝ կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 2012 – 2013 թվականի համար կազմում է 11749000/տասնմեկ միլիոն յոթ հարյուր քառասունինը հազար/ դրամ<br>Ծրագրի բյուջեն 2013 – 2014 թվականի համար կազմում է 11749000/տասնմեկ միլիոն յոթ հարյուր քառասունինը հազար/ դրամ<br>Ծրագրի ընդհանուր բյուջեն 2 տարվա համար կազմում է 23.498.000 քսաներեք միլիոն չորս հարյուր իննսունութ հազար դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողներ են հանդիսանում Հարավ արևմտյան թաղամասերի երեխաները – 241 /երկու հարյուր քառասունմեկ/ երեխա:<br>Երեխաների ընտրության մեջ նախապատվությունը տրվում է սոցիալապես անապահով բազմազավակ, զոհված ազատամարտիկների և սոցիալական ծառայությունների կողմից հաշվառման վերցված ընտանիքների երեխաներին, քանի որ դպրոցը անհատույց հոգում է գրենական պիտույքների, դասագրքերի,սննդի, միջոցառումների համար հագուստների , ձեռքի աշխատանքի համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերման բոլոր ծախսերը: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2012թվ. – 01.01.2014թվ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Հայ կրթություն» կրթական հիմնադրամը անհատույց իրականացնում է համալիր կրթական ծրագիր՝ Նախադպրոցական և հիմնական կրթություն:<br>Նախադպրոցական ծրագիրը իր մեջ ներառում է երեք տարիքային խմբեր՝ 3-5 տարեկան, յուրաքանչյուր խմբում 17 երեխա, և առաջնորդվում է ՀՀ ԿԳՆ նախադպրոցական ծրագրերով:<br>Մանկապարտեզ հաճախող 51 երեխաները օրական 3 անգամ անվճար սնվում են մանկապարտեզում:<br>Դպրոցական ծրագիրը նույնպես աշխատում է ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված ծրագրերով, իսկ հավելյալ ուսումնասիրվող ծրագրերը հաստատվում են լեզվի բարեփոխումների կենտրոնում:<br>Կրթահամալիրը ապահովում է Նախադպրոցական և հիմնական կրթություն / 1-9 –րդ դասարաններ/,որտեղ հաճախում են 190 երեխաներ: Դպրոց հաճախող երեխաները օրական 1 անգամ (նախաճաշիկ) անվճար սնվում են դպրոցում:<br>Դպրոցը գործում է շաբաթական 5 օր և տարեկան 9 ամիս:<br>Ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ միջոցների ծավալը՝<br><u>Սննդի ձեռքբերում – </u>(Նախատեսված մանկապարտեզի և դպրոցի համար)<br>"Ամարաս Յուս" ՍՊԸ – մոտ 1.152.000 մեկ միլիոն հարյուր հիսուներկու հազար դրամ :<br>" Միրաժ" ՍՊԸ – մոտ 2.227.000 երկու միլիոն երկուհարյուր քսանյոթ հազար դրամ :<br>"Դուստր Մարիաննա" ՍՊԸ - մոտ 220.000 երկու հարյուր քսան հազար դրամ :<br>"Արաքս" թռչնաֆաբրիկա ՓԲԸ – մոտ 235.000 երկու հարյուր երեսունհինգ հազար դրամ :<br>"Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա" ԲԲԸ – մոտ 150.000 հարյուր հիսուն հազար դրամ:<br><br>Տնտ. ապրանքների ձեռքբերում - մոտ 395.000 երեք հարյուր իննսունհինգ հազար դրամ:<br>Գրենական պիտույքների ձեռքբերում - մոտ 375000 երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ<br>"Հայաստանի էլ. ցանցեր" ՓԲԸ - 3.175.000 երեք միլիոն հարյուր յոթանասունհինգ հազար դրամ:<br>Ջրմուղ- կոյուղի ՊՓԲԸ - մոտ 600.000 վեց հարյուր հազար դրամ:<br>Դեռատիզացիա - 60.000 վաթսուն հազար դրամ:<br>Աղբահանություն – 120.000 հարյուր քսան հազար դրամ:<br>Արմենտել ՀՁ ՍՊԸ –293.000 երկու հարյուր իննսուներեք հազար դրամ:<br>Օնլայն պլյուս ՍՊԸ - մոտ 50.000 հիսուն հազար դրամ<br>EMAIL – – մոտ 157000 հարյուր հիսունյոթ հազար դրամ:<br><u>Գույքի ձեռքբերում</u> / համակարգչային սարքավորումներ, սեղան, աթոռ և այլն/Նախատեսված մանկապարտեզի և դպրոցի համար) - մոտ 1.800.000 մեկ միլիոն ութ հարյուր հազար դրամ:<br><u>Սպիտակեղենի ձեռքբերում</u> Նախատեսված մանկապարտեզի համար) – մոտ 185.000 հարյուր ութսունհինգ հազար դրամ:<br><u>վերանորոգության ծախսեր / տանիք/</u>Նախատեսված մանկապարտեզի և դպրոցի համար)– 555.000հինգ հարյուր հիսունհինգ հազար դրամի չափով:<br>Վերոհիշյալ գումարները հաշվարկված են առանց ԱԱՀ-ի և 1 տարվա կտրվածքով: |

| | | |
|---|---|---|
| 10. | Չեռք բերվող ներմուծվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Սնունդ - 3.984.000 (երեք միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար ) դրամ առանց ԱԱՀ – պայմանագրերը կներկայացվեն առանձին՝ հարակից գործարքներով:<br>Տնտ. ապրանքների ծեռքբերում - մոտ 395.000 երեք հարյուր իննսունհինգ հազար դրամ:<br>Գրենական պիտույքների ծեռքբերում - մոտ 375000 երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ<br>EMAIL – – մոտ 157000 հարյուր հիսունյոթ հազար դրամ:<br><u>Գույքի ծեռքբերում</u> Նախատեսված մանկապարտեզի և դպրոցի համար) - մոտ 1.800.000 մեկ միլիոն ութ հարյուր հազար դրամ:<br><u>Սպիտակեղենի ծեռքբերում</u> Նախատեսված մանկապարտեզի համար) – մոտ 185.000 հարյուր ութսունհինգ հազար դրամ:<br><u>վերանորոգության ծախսեր</u> Նախատեսված մանկապարտեզի և դպրոցի համար)– 555.000հինգ հարյուր հիսունհինգ հազար դրամի չափով:<br>Վերոհիշյալ գումարները հաշվարկված են առանց ԱԱՅ-ի և 1 տարվա կտրվածքով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված Կազմակերպչական ծախսեր նախատեսվում են ընդհանուր բյուջեի 15 տոկոսի չափով:<br>Ջրմուղ- կոյուղի ՊՓԲԸ - մոտ 600.000 վեց հարյուր հազար դրամ:<br>Դեռատիզացիա - 60.000 վաթսուն հազար դրամ:<br>Աղբահանություն – 120.000 հարյուր քսան հազար դրամ:<br>Արմենտել ՀՁ ՍՊԸ –293.000 երկու հարյուր իննսուներեք հազար դրամ:<br>Օնլայն պլյուս ՍՊԸ - մոտ 50.000 հիսուն հազար դրամ<br>EMAIL – մոտ 157.000 հարյուր հիսունյոթ հազար դրամ:<br>Կազմակերպական ծախսերը 1 տարվա կտրվածքով կազմում է 1.280.000 մեկ միլիոն երկու հարյուր ութսուն հազար դրամ առանց ԱԱՀ-ի |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | • ՀՀ Կրթության և Գիտության Նախարարություն<br>• Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մ/ճ<br>• UMCOR<br>• Ջինիշյան հիշատակի հիմնադրամ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվում է Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության կողմից, ՀՀ Կրթության և Գիտության Նախարարություն և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով են ներկայացվում համապատասխան հաշվետվություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**29 մայիսի 2012 թվականի N Մ - 383-Ա**

**քաղ. Երևան**

## «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆՈՐՈՇՎԱԾ ԱՐՑԱԽԻՆ» ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԻՆՏԵԳՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2012 թվականի մայիսի 22–ի համաձայնեցման թերթիկը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Աջակցություն ինքորոշված Արցախին» միավորման հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 500000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Հաշմանդամների բուժսպասարկում և ինտեգրում հասարակությանը» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ֆրանսիայի «Աջակցություն ինքորոշված Արցախին» միավորման կողմից իր հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռը («Renault Master» մակնիշի 2005 թվականի արտադրության երեք մեքենա, նույնականացման համարները՝ VF1JDSJO534241154, VF1JDSJD534241153, VF1JDSJD534241156 և 2006 թվականի արտադրության մեկ մեքենա, նույնականացման համարը՝ VF1JDSJD534921988, 12000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, ԱՄ ՄՁՄ ՄՏ ու հաշմանդամների համար նախատեսված 4 հատ անվասայլակ, 336 կգ ընդհանուր քաշով, 4850 եվրոյին համարժեք դրամ արժքղությամբ, «Արարատյան» ՏՄ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 9469.46 եվրո) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Աջակցություն ինքորոշված Արցախին» միավորման հայաստանյան մասնաճյուղին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Աջակցություն ինքնորոշված Արցախին» [illegible] միավորման Հայաստանյան

մասնաճյուղի տնօրեն [illegible] կողմից

«17» մայիս 2012.թ.

«Հաշմանդամների բուժսպասարկում և ինտեգրում հասարակությունում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել հաշմանդամների ինտեգրմանը հասարակությանը, մասնագիտացված բուժհիմնարկների և ինտերնատների տեխնիկական վերազինմանը, մասնավորապես հենաշարժողական ապարատի խնդիրներ ունեցող հաշմանդամներին անվնաս և հարմարավետ տեղափոխելու համար նախատեսված հատուկ մասնագիտացված մեքենաներ և անվասայլակներ տրամադրելը: Բժշկական ախտորոշիչ և լաբորատոր սարքավորումներով Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ սահմանամերձ բնակավայրերի բուժկետերը համալրելը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ,Աջակցություն ինքնորոշված Արցախին (ԱԻԱ) միավորում (Ֆրանսիա, 94140 Ալֆորտվիլ, Լուիզի փողոց, տուն 3), հեռ. +33663129980 |
| 4. | Ծրագիրը կատարողը | ,Աջակցություն ինքնորոշված Արցախին (ԱԻԱ) միավորման հայաստանյան մասնաճյուղ (քաղ. Երևան, Արշակունյաց 5, ՀՎՀՀ 00452506) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ ողջ տարածքում՝ բնագավառը սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Նախատեսված ծրագրի ընդհանուր բյուջեն է 500,000 եվրո: |
| 7. | Բարեգործություն ստացողը | 1. ԼՂՀ առողջապահության նախարարության ,Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն ՊՈԱԿ (ԼՂՀ, քաղ. Ստեփանակերտ, Վ. Սարոյան 41-ա, հեռ.՝ +374047-95-04-55, ՀՎՀՀ՝90013514)՝ տարեկան սպասարկում է շուրջ 600 հիվանդ.<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ,Խարբերդի մասնագիտացված մանկատուն ՊՈԱԿ (ՀՀ, Արարատի մարզ, գյուղ Նոր Խարբերդ, Բաղրամյան 58, հեռ. +374237 6 00 25, +374236 6 45 00, +37491 42 79 60, ՀՎՀՀ՝ |



| | | |
|---|---|---|
| | | 03801255)՝ մանկատունն ունի 280 մշտական սան.<br>3. Օրթեզավորման կենտրոն ,ՕՐԹԵԶԵ ՍՊԸ (ՀՀ, քաղ. Երևան, Փափազյան 32, հեռ. +37410 26 99 22, ՀՎՀՀ՝ 00036503): ,Օրթեզե ՍՊԸ -ն հանդիսանում է մանկական մասնագիտասված օրթեզավորման կենտրոնը, որը 20 տարի զբաղվում է հենաշարժողական բարդույթներ, ինչպես նաև բնածին ֆիզիկական արատ ունեցող հիվանդ երեխաների օրթեզավորմամբ: 2000 թվականից սկսած Օրթեզավորման կենտրոնը մանկական օրթեզավորումը իրականացվում է պետ պատվերի շրջանակներում բոլոր այն երեխաների համար ովքեր մտնում են պետության կողմից երաշխավորած բուժ օգնության ցանկի մեջ: Ցանկը բաղկացած է 13 կետից: Օրթեզավորման կենտրոնը սպասարկում է հաշմանդամ երեխաներին նաև իրենց գտնված վայրերում (մանկատներում, մասնագիտացված կենտրոններում, հիվանդանոցներում), որոնք պրոբլեմ ունեն տեղաշարժվելու: Օրթեզավորման կենտրոնը տարին մի քանի անգամ այցելում է Հայաստանի և ԼՂՀ մանկական կենտրոններ տեղում ապահովելով մասնագիտական որակյալ ծառայություն: Տարեկան սպասարկվում է 600-900 երեխա, իսկ սարքերի քանակը կազմում է 900-1300 հատ: ՀՀ Առողջապահության նախարարության կողմից ճանաչվել է որպես առողջապահական կազմակերպություն:<br>4. Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոն ՓԲԸ<br>Հասցե՝Էջմիածնի հին խճուղի 109<br>Հեռ.՝ +37410 56 21 71<br>ՀՎՀՀ - 01806759<br>(2005թ. կենտրոնը սեփականաշնորհվել է և կոլեկտիվի սեփականությունն է, ֆինանսավորվումը իրականացնում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Կենտրոնը իրականացնում է նյարդային և ոսկրամկանային համակարգի խնդիրներով անձանց ֆիզիկական և սոցիալ հոգեբանական վերականգնումը: Կենտրոնում վերականգնողական բուժում են ստանում կենտրոնական և պերիֆերիկ նյարդային համակարգի ախտահարումներով անձինք (մանկական ուղեղային կաթված, տարբեր էթիոլոգիայի գլխուղեղի վնասվածք, ողնուղեղային վնասվածք ), նեյրոմկանային հիվանդություններ, կեցվածքի շեղումներ, ամպուտացիաներ և այլն: Հսկողության տակ ունի 4000 հիվանդ, տարեկան սպասարկում է 800 հիվանդ: Կենտրոնը կազմակերպում է նաև արտագնա կլինիկաներ Հայաստանի տարբեր մարզեր և մանկատներ: Կենտրոնը հանդիսանում |

| | | |
|---|---|---|
| | | է բազա Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական բժշկական համալսարանը, ֆիզկուլտուրայի ու սպորտի պետական ինստիտուտների համար: <br> 5. ՀՀ և ԼՂՀ այլ բուժհաստատությունների և հասարակական բարեգործական կազմակերպությունների՝ բարեգործի որոշմամբ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15.05.2012 – 31.12.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ֆրանսիայում ձեռք են բերվելու և ՀՀ են ներմուծվելու 16 հատ հատուկ մասնագիտացված մեքենաներ (240,000 եվրո ընդհանուր արժողությամբ) և անվասայլակներ նախատեսված (160,000 եվրո ընդհանուր արժողությամբ) հենաշարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամների համար և այլ անհրաժեշտ համալրող սարքեր և բժշկական սարքավորումներ (100,000 եվրո ընդհանուր արժողությամբ): <br> - 2012թ. ներմուծված չորս մեքենաները և չորս անվասայլակները կտրվեն ծրագրի 7-րդ կետում նշված չորս շահառու կառույցներին (յուրաքանչյուրին մեկ մեքենա և մեկ անվասայլակ) նվիրաբերման սկզբունքով, 3 տարվա պայմանագրով, որից հետո, նպատակային օգտագործման դեպքում այն կտրվի շահառու կազմակերպությանն որպես սեփականություն: Հետագայում շահառուների ցանկը կընդլայնվի: Մյուս 12 մեքենաները և անվասայլակները կտրվեն ՀՀ և ԼՂՀ տարածքում գործող այլ հասարակական բարեգործական կազմակերպությունների՝ բարեգործի որոշմամբ: <br> - Ֆրանսիայից հրավիրվում է մասնագետ, ով կծանոթացնի մեքենայի շահագործման կանոնների ու առանձնահատկությունների հետ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հատուկ մասնագիտացված մեքենաներ և էլեկտրականությամբ աշխատող անվասայլակներ հենաշարժողական և նյարդապարալիտիկ խնդիրներ ունեցող հիվանդների տեղափոխման համար և բժշկական ախտորոշիչ և լաբորատոր սարքավորումներ ՀՀ սահմանամերձ բնակավայրերում և ԼՂՀ-ում բուժկետերը համալրելու համար: Մեքենան ունի հարմարեցված ամբարձիչ, որն անվասայլակով հիվանդին բարձրացնում է մեքենա: Մեկ մեքենան կարող է սպասարկել 4 հիվանդ միաժամանակ: <br> Նախատեսվում է ներկրել 16 մեքենա (240,000 եվրո ընդհանուր արժողությամբ) և 16 անվասայլակ (160,000 եվրո ընդհանուր արժողությամբ) և այլ |



| | | |
|---|---|---|
| | | անհրաժեշտ համալրող սարքեր և բուժսարքավորումներ (100,000 եվրո ընդհանուր արժողությամբ): |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ՀՀ Առողջապահության նախարարության, ՀՀ Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության, ԼՂՀ Առողջապահության նախարարության, ԼՂՀ Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության և ՀՀ և ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների և շահագրգիռ հասարակական բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցություն: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը իրականացվում է Աջակցություն ինքնորոշված Արցախին միավորման կողմից, ինչպես նաև սահմանված կարգով, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին հաշվետվություն ներկայացնելով: <br> Ըստ նվիրաբերման պայմանագրի, շահառու կազմակերպությունը պարտավորվում է վեց ամիսը մեկ անգամ մեզ ներկայացնել մեքենայի նպատակային շահագործման հաշվետվությունը՝ նշելով երթուղիները և հիվանդների քանակը՝ կցելով անվանացանկը: <br> Պարբերաբար կայցելվի շահառու հիմնարկներ, հետևելով պայմանագրով ամրագրված պարտավորվածությունների բարեխղճորեն կատարմանը: |

Ծրագիրը ներկայացրեց ---------- Մկրտիչ Տոնոյան

«17» ______ 2012